ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3161 << 03 >> 12 2014թ.

Ձեր 31.10.2014թ. թիվ 2621/1484 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբերի 26-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Լոռու մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում քաղաքացի Զ.Խաչատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստվող նյութերի անհրաժեշտությունից ելնելով՝ 25.10.2014թ. ժամը 02:40-ին ոստիկանության ծառայողները հասցեից ոստիկանության Տարոնի բաժնի վարչական շենքում տեղակայված ՀՀ ՔԿ Լոռու մարզի քննչական վարչություն բերման են ենթարկել Արմեն Թամարյանին, որի հետ պարզաբանումներ կատարելուց հետո վերջինիս տեղափոխել են ոստիկանության Բազումի բաժին և անհրաժեշտ գործողություններ կատարելուց հետո, նյութերի հետ միասին դարձյալ ներկայացրել են վերոնշված քննչական վարչություն: 2014թ. հոկտեմբերի 25-ին ժամը 04:45-ին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական գործի շրջանակներում Ա.Թամարյանը ձերբակալվել և ժամը 05.10-ին ընդունվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ:

1. Ա.Թամարյանը ոստիկանության Տարոնի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ է ընդունվել 25.10.2014թ. ժամը 05.10-ին, ում մարմնի արտաքին զննությամբ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, ինչի կապակցությամբ հրավիրվել է շտապօգնության խումբ և իրազեկում է տրվել վարույթն իրականացնող մարմնին: 25.10.2014թ. ժամը 10.28-ին Ա.Թամարյանը

գանգատվել է իր առողջական վիճակից, որի կապակցությամբ հրավիրվել է շտապօգնության խումբ: Խմբի կողմից ցուցաբերվել է համապատասխան բուժօգնություն, միաժամանակ խորհուրդ է տրվել նյարդաբանի կոնսուլտացիա: Նույն օրը ժամը 15.50-ին Ա.Թամարյանը կրկին գանգատվել է առողջական վիճակից, սակայն հրաժարվել է հրավիրված շտապօգնության խմբի բուժօգնությունից՝ հայտնելով, որ հոգեկան հիվանդ է, կարիք ունի հոգեմետ դեղերի, որոնք հիվանդության վերաբերյալ փաստաթղթերի հետ միասին գտնվում են իր մոր՝ Անահիտ Թամարյանի մոտ: Այդ կապակցությամբ ՁՊՎ վարչակազմը զանգահարել է Անահիտ Թամարյանին, ով հայտնել է, որ չգիտի, թե ինչ փաստաթղթերի և դեղերի մասին է խոսքը: Բացի այդ հրավիրված բժիշկ Մարկոսյանը խորհուրդ է տվել հոգեբույժի կոնսուլտացիա: Ա.Թամարյանին հետազոտելու նպատակով համապատասխան գրություն է ուղարկվել Լոռու մարզի նյարդահոգեբանական դիսպանսեր, որի գլխավոր բժիշկ Գ.Քալանթարյանը հեռախոսով հայտնել է, որ Ա.Թամարյանը իրենց մոտ հաշվառված չէ, իսկ հետազոտման համար մասնագետներ կարող է տրամադրել միայն առաջիկա աշխատանքային օրը՝ հոկտեմբերի 27-ին: 26.10.2014թ. ձերբակալված Ա.Թամարյանը կրկին գանգատվել է իր առողջական վիճակից և հերթական անգամ հրաժարվել է հրավիրված շտապօգնության խմբի օգնությունից՝ պահանջելով հոգեմետ դեղեր: Նույն օրը ժամը 14.10-ին ՁՊՎ վարչակազմի ջանքերի շնորհիվ Լոռու մարզի նյարդահոգեբանական դիսպանսերից հրավիրվել է հոգեբույժ, որը զննել է ձերբակալված Ա.Թամարյանին՝ նշելով, որ ախտորոշման համար անհրաժեշտ է ստացիոնար հետազոտում և նշանակել է <<Կարտամազեպին>>-ի դեղահաբեր, ինչի մասին տեղյակ է պահվել վարույթն իրականացնող մարմնին: Ա.Թամարյանը 26.10.2014թ. ժամը 19.00-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ:

2. ՁՊՎ-ում գտնվելու ողջ ժամանակահատվածում Ա.Թամարյանի բերանից արյուն չի հոսել և նա այդ մասին գանգատներ չի ներկայացրել ոչ հրավիրված շտապօգնության խմբերին և ոչ էլ ՁՊՎ-ի վարչակազմին: Ծառայողական քննության արդյունքում պարզվել է, որ դիտորդների խմբի այցելության պահին Ա.Թամարյանը սրբիչը քսել է իր հոնքի շրջանում նախկինում եղած վերքին, արյունոտել և դիտորդների խմբին ցույց է տվել, թե իբրև բերանից արյուն է հոսել:

3. Ձերբակալված Ա.Թամարյանին հանրային պաշտպան տրամադրելու հարցը ոստիկանության իրավասությունից դուրս է, քանի որ այդ գործառույթն իրականացնում է վարույթն իրականացնող մարմինը: Ինչ վերաբերվում է ոստիկանության ծառայողների կողմից նրան ծեծի ենթարկելու փաստին, ապա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ, որտեղ վերջնական պարզաբանումներ կտրվեն բոլոր նմանատիպ հարցերին:

4. Դիտորդների խմբի կողմից կատարված հեռախոսազանգին ոստիկանության Տարոնի բաժնի հերթապահ մասի պետը պատասխանել է, որ ձերբակալված Ա.Թամարյանին ծեծի ենթարկելու փաստը սահմանված կարգով գրանցվել է, նրան ցուցաբերվել է համապատասխան բուժօգնություն, իսկ կարգավիճակի մասին պատասխանել է, որ քննիչը փաստաթղթերը տարել է դատարան, որից հետո դատարան կտեղափոխվի նաև Ա.Թամարյանը:

5. Ձերբակալվածին ուղեկցելու հայտը Լոռու մարզի դատախազի կողմից հասցեագրված է եղել ինչպես ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին, այնպես էլ ոստիկանության Տարոնի բաժնի պետին և ուղեկցող ծառայողներին ընտրելու հարցը որոշվել է բաժնի ղեկավարության կողմից: Ա.Թամարյանին դատարան ուղեկցելու մասին Լոռու մարզի դատախազության գրության առաջին օրինակը ոստիկանության Տարոնի բաժնի պետի կողմից մակագրված վիճակում գտնվել է հերթապահ մասում, դիտորդների խումբը տեսել է երկրորդ օրինակը, որի վրա պետք է նշում կատարվեր առաջին օրինակը ստանալու մասին: Հերթապահ մասի պետը հերթապահ մասի տարածքը չի լքել, այլ վարչական տարածքից դուրս գալով՝ հերթապահին ասել է, որ դիտորդների խմբին ներկայացնի ուղեկցման գրությունը: ՁՊՎ-ի

վարչակազմը ղեկավարվելով <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն և 02.04.2009թ. թիվ 354-Ն որոշումներով հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 174-րդ կետի և <<Ձերբակալված և կալանավորված անձանց ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին>> կարգի 46-րդ կետի պահանջներով՝ Ա.Թամարյանին ներկայացրել է ուղեկցողներին:

6. Ա.Թամարյանի հագուստի և անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրության մեջ ամիս-ամսաթվի բացակայությունը բացթողում է ՁՊՎ-ի վարչակազմի կողմից, որի համար ՁՊՎ-ի ոստիկանը խիստ նախազգուշացվել է, թեև այդ հանգամանքը բացասաբար չի անդրադարձել ձերբակալվածի իրավունքների և ազատությունների վրա:

7. Ձերբակալված Ա.Թամարյանին 25.10.2014թ. երկու անգամ՝ ժամը 10.28-ին և 15.30-ին ցուցաբերվել է բուժօգնություն, որի վերաբերյալ բժիշկները համապատասխան գրառումներ են կատարել <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, սակայն ՁՊՎ ոստիկանը <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում միայն մեկի վերաբերյալ է կատարել գրառում՝ բացատրելով, որ 25.10.2014թ. առավոտյան ՁՊՎ-ում եղել են երկու ձերբակալվածներ, Ա.Թամարյանը անընդհատ իրեն կանչել է խցի դռան մոտ, աղմկել, տվել անհեթեթ հարցեր, մյուսին էլ նույն ժամին ուղարկել է դատարան և ծանրաբեռնվածության պատճառով մոռացել է կատարել գրառում: Այդ կապակցությամբ ՁՊՎ ոստիկանը խիստ նախազգուշացվել է:

8. 26.10.2014թ. հեռախոսազանգի իրավունքից օգտվելու համար Ա.Թամարյանին խցից դուրս բերելու ժամը ՁՊՎ ոստիկանը գրառել է ժամը 12.30-ը՝ նայելով իր բջջային հեռախոսի ֆիքսած ժամին, որը եղել է սխալ՝ մեկ ժամ հետ: Գրանցամատյանում գրառում կատարելու ժամանակ անհետևողականություն ցուցաբերելու համար ՁՊՎ ոստիկանը խիստ նախազգուշացվել է:

Ա.Թամարյանին փաստաբան չտրամադրելու և նրան ոստիկանության ծառայողների կողմից ծեծի ենթարկելու հարցերի շուրջ պարզաբանումներ ստանալու համար առաջարկվում է դիմել համապատասխանաբար ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

ՀՀ ոստիկանության շտաբ